ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 485-Ա/2 **«08» ապրիլ 2024 թ.**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋԱՏԱՐ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ ԿԱՄ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված առաջատար ամսագրերում կամ հրատարակչություններում հրատարակությունների ծախսերը փոխհատուցելու համար մրցույթ կազմակերպելու և ֆինանսական միջոցներ տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«08» ապրիլ 2024 թ.
N 485-Ա/2 հրամանի

Կ Ա Ր Գ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋԱՏԱՐ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ ԿԱՄ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերում ընդգրկված գիտական աշխատողների՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Web of Science» կամ «Scimago Journal & Country Ranking») ներառված առաջատար ամսագրերում գիտական աշխատանքների հրատարակման ծախսերը փոխհատուցելու համար մրցույթ կազմակերպելու և ֆինանսական միջոցներ տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), սույն կարգի պահանջներին համապատասխան, կազմակերպում է մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

3. Կոմիտեն Մրցույթի արդյունքներով ֆինանսական միջոցներ է տրամադրում «Web of Science» միջազգային գիտատեղեկատվական շտեմարանների կամ «Scimago Journal & Country Ranking» պորտալի բնական գիտությունների, ճարտարագիտության և տեխնոլոգիաների, բժշկական գիտությունների, գյուղատնտեսական գիտությունների մասնագիտություններով Q1 քառորդում ընդգրկված, իսկ հասարակական գիտությունների, հայագիտության և հումանիտար գիտությունների մասնագիտություններով՝ առնվազն Q2 քառորդում ընգրկված գիտական ամսագրերում գիտական հոդվածների հրատարակման ծախսերը փոխհատուցելու համար:

4. Մրցույթի շրջանակներում չեն դիտարկվում.

1) MDPI, Frontiers և Hindawi հրատարակչություններում ընդգրկված ամսագրերում հրատարակված գիտական աշխատանքները,

2) 50 և ավելի հեղինակներ ունեցող գիտական աշխատանքները:

5. Մրցույթին ներկայացվող գիտական աշխատանքների հրատարակման ծախսերը փոխհատուցելու համար ֆինանսական միջոցներ տրամադրվում են՝ ծախսերը Կազմակերպության կողմից իրականացված լինելու դեպքում՝ ներքոնշյալ պայմանները միաժամանակ բավարարելու պարագայում.

1) գիտական աշխատանքում հեղինակներից առնվազն մեկի աշխատավայր (affiliation) պետք է նշված լինի Կազմակերպությունը,

2) գիտական աշխատանքի տպագրության (publication date) կամ առցանց հասանելի դառնալու (available online) ժամկետը պետք է լինի 2024 թվականի հունվարի 1-ից հետո,

3) գիտական աշխատանքը պետք է մուտքագրված լինի Կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման grants.hesc.am համակարգ (գիտական աշխատանքի հեղինակ(ներ)ի «Անհատական տվյալներ» բաժին):

6. Հրատարակման ծախսերը փոխհատուցելու համար ֆինանսական միջոցների չափը Կոմիտեի կողմից հաշվարկվում է գումարի փոխանցման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հայտարարած՝ տվյալ արտարժույթի նկատմամբ դրամի փոխարժեքով:

7. Հրատարակման ծախսերը փոխհատուցելու համար ֆինանսական միջոցների տրամադրման առավելագույն չափը յուրաքանչյուր գիտական աշխատանքի համար 2,500.0 հազար (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ է:

8. Հրատարակված յուրաքանչյուր գիտական աշխատանք Մրցույթին կարող է ներկայացվել մեկ անգամ:

9. Կազմակերպությունը Մրցույթին մասնակցելու հայտ(եր)ը (այսուհետ՝ Հայտ)՝ ներկայացնում է Կոմիտեի orgs.hesc.am համակարգով:

10. Կազմակերպության ներկայացուցիչը (գիտական քարտուղար կամ այլ պատասխանատու անձ) մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա առաջին տասնօրյակը ներառյալ, մեկ ընդհանուր փաթեթով, Կազմակերպության ղեկավարի պաշտոնական գրությամբ Կոմիտե է ներկայացնում Կազմակերպության կողմից ներկայացված բոլոր Հայտերի ստորագրված և կնքված թղթային տարբերակների փաթեթներն՝ առձեռն:

11. Հայտերը գնահատելու համար ստեղծվում է աշխատանքային խումբ, որն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, ըստ անհրաժեշտության:

12. Աշխատանքային խումբն առաջին նիստում հաստատում է Հայտի գնահատման թերթիկի ձևը:

13. Հայտը գնահատելիս աշխատանքային խումբը հաշվի է առնում գիտական աշխատանքի հեղինակ(ներ)ի գիտական գործունեության արդյունավետությունը, գիտական աշխատանքը հրատարակած ամսագրի վարկանիշը, գիտական աշխատանքի միջազգային համահեղինակության առկայությունը, Կազմակերպության արդյունավետությունը և այլն:

14. Մրցույթին ներկայացված գիտական աշխատանքի հեղինակ(ներ)ի գիտական գործունեության և Կազմակերպության արդյունավետությունը գնահատելու համար հիմք է հանդիսանում Կոմիտեի grants.hesc.am և orgs.hesc.am համակարգերում առկա տեղեկատվությունը:

15. Հայտերի գնահատման ընթացքում առաջացած հարցերի պարզաբանման համար աշխատանքային խումբը գիտական աշխատանքի հեղինակ(ներ)ի հետ կարող է անցկացնել հարցազրույց, ինչպես նաև Կազմակերպությունից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

16. Աշխատանքային խումբը Հայտերը գնահատելուց հետո տալիս է դրանք բավարարելու նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն՝ առաջարկելով.

1) փոխհատուցում տրամադրել ամբողջությամբ,

2) փոխհատուցում տրամադրել մասամբ (նշելով գումարի չափը),

3) փոխհատուցում չտրամադրել (սույն կարգի 3-րդ և 5-րդ կետերի պահանջներին չբավարարելու դեպքում, ինչպես նաև 4-րդ կետում նշված դեպքերում):

17. Աշխատանքային խմբի եզրակացության հիման վրա կայացված Կոմիտեի որոշման մասին գրավոր տեղեկացվում է Կազմակերպության ղեկավարը:

18. Կոմիտեի և Կազմակերպության միջև կնքվում է orgs.hesc.am համակարգում ինքնաշխատ եղանակով կազմված Գիտական աշխատանքների հրատարակման ծախսերը փոխհատուցելու համար ֆինանսական միջոցներ տրամադրելու մասին պայմանագիր: